ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ N 3

ԳՈՐԾԱՐԱՐԱՐ (ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ) ԾՐԱԳԻՐ

ՀԱՄԱՅՆՔԻ

Գավառ համայնքի

(համայնքի անվանումը)

ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԼԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1. Տեղեկություններ գործարար (ներդրումային) ծրագիրը իրականացնող համայնքի մասին:

1.1.1. Համայնքի լրիվ անվանումը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք

1.1.2. Հաստատվել է Գավառ համայնքի ավագանու 2022թ. հունվարի 11-ի N 3 –Ա որոշմամբ

1.1.3 Փոստային հասցեն՝ 1201

1.1.4. Տվյալներ (հեռախոս/ֆաքս, էլեկտրոնային հասցե. +37426423423, էլ. հասցե. gavari.hamaynqapetaran@gmail.com

Վեբ կայք gavarihamaynqapetaran.am

1.2. Գործարար (ներդրումային) ծրագիրը հաստատվել է Գավառ համայնքի ավագանու 2024 թ. ապրիլի 12-ի N 143-Ա որոշմամբ և համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված՝ տվյալ մարզի զարգացման ռազմավարության ծրագրին:

Համայնքի ղեկավար՝ Գուրգեն Մարտիրոսյան, հեռ. +37426423423

Հաշվապահական ծառայության ղեկավար՝ Տիգրան Բրսիկյան:

2. Համայնքի կողմից գործարար (ներդրումային) ծրագրի նպատակներն և խնդիրները

2.1. Համայնքի նպատակներն են՝

1) համայնքապետարանի տարածքի բարելավումը

2) բնակիչներին մատուցվող ծառայությունների արդյունավետության և որակի բարձրացումը:

2.2 Համայնքի խնդիրներն են՝

1) համայնքապետարանի տարածքի սղությունը

2) վերանորոգման անհրաժեշտությունը

3) կահավորումը

3. Համայնքի կողմից իրականացվող գործարար (ներդրումային) ծրագիրը

3.1. Գործարար (ներդրումային) ծրագրի ընդհանուր նկարագիրը և իրականացման հիմնական նպատակը.

Սույն ծրագիրն իրենից ներկայացնում է Գավառի համայնքապետարանի աշխատակազմի համար լրացուցիչ աշխատանքային տարածքի ձեռքբերում և վերանորոգման աշխատանքների իրականացում՝ գործող շենքին կից և նպատակ ունի լուծել ներկայիս տարածքի սղության խնդիրը:

3.2. Տեղեկատվություն գործարար (ներդրումային) ծրագիրը իրականացնելու մասին.

Սույն ներդրումային ծրագիրն իրականացնում են

Գավառի համայնքապետարանը համապատասխան պայմանագրի միջոցով:

3.3. Ծրագրի գործողության ոլորտը

Սույն ծրագիրն իրականացվում է հետևյալ ոլորտներում՝

Համայնքի բնակիչներին տրամադրվող ծառայությունների մատուցում:

3.4. Գործարար (ներդրումային) ծրագրի նորմատիվաիրավական կարգավորումը.

Սույն ծրագրով իրականացվող միջոցառումներն են.

1) Համայնքի ավագանու կողմից հաստատված ծրագրի կատարում,

2) վերանորոգում.

3) կահավորում:

3.5. Գործարար (ներդրումային) ծրագրի ներդրումային բյուջեն և իրականացման ժամանակահատվածը.

3.5.1. Սույն գործարար (ներդրումային) ծրագրի բյուջեն կազմում է

12 000 000 (տասներկու միլիոն) դրամ:

3.5.2. Սույն գործարար (ներդրումային) ծրագրի իրականացման համար սահմանված մեկ տարի ժամկետում, ներդրողը ըստ տարիների նախատեսում է կատարել հետևյալ ներդրումներ և ստեղծել աշխատատեղեր՝

1) վերանորոգել ձեռք բերված տարածքը:

3.6. Գործարար (ներդրումային) ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ներդրումների ֆինանսավորման աղբյուրները և ծրագրի իրականացումն ապահովող առաջնահերթ միջոցառումները.

3.6.1. Սույն ծրագրի շրջանակներում անհրաժեշտ բյուջեն ձևավորվում է՝

Գավառ համայնքի բյուջեի միջոցներից:

3.6.2. Սույն ծրագրի շրջանակներում կազմակերպությունը ըստ ժամանակացույցի նախատեսում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1) վերանորոգման աշխատանքներ

2) կահավորում:

3.7. Գործարար (ներդրումային) ծրագրով նախատեսված ֆինանսավորման ուղղությունները

Սույն ծրագրի շրջանակներում նախատեսված ֆինանսավորման ուղղություններն են.

1) Վերանորոգման աշխատանքների իրականացում և գույքի ձեռքբերում 12 000 000 ՀՀ դրամ:

4. Գործարար (ներդրումային) ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքները

Արդյունքում ձեռք կբերվի 105,8 քմ լրացուցիչ վարչական տարածք, ինչը կբարձրացնի համայնքի կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների որակը:

5. Գործարար (ներդրումային) ծրագրի իրականացման ռիսկերը և մեղմացման միջոցառումները

5.1. Սույն ծրագրի իրականացման ժամանակահատվածում հնարավոր ռիսկերը.

1) ծառայությունների ոչ պատշաճ կատարումը:

5.2. Հնարավոր ռիսկերի մեղմացման նպատակով իրականացվող միջոցառումները

1) Պայմանագրի կետերի հստակեցում,

2) Իրականացվող աշխատանքների վերահսկում:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

12.04.2024 թ.